«Յուքոմ» ՍՊԸ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ
2013թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

KPMG Armenia cjsc
8th floor, Erebuni Plaza Business Center,
26/1 Vazgen Sargsyan Street
Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա ՓԲԸ
ՀՀ, Երևան, 0010
Վ.Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
8-րդ հարկ

Telephone Հեռախոս + 374 (10) 566 762
Fax Ֆաքս + 374 (10) 566 762
Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Յուքոմ» ՍՊԸ
Ղեկավարությանը

Մենք իրականացրել ենք «Յուքոմ» ՍՊԸ-ի («Ընկերություն») և վերջինիս դուստր կազմակերպությունների («Խումբ») կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-էմ-Զի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-էմ-Զի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Եզրակացություն

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի ֆինանսական վիճակը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Էնդրյու Քոքսշել
Տնօրեն

Տիգրան Գասպարյան
Աուդիտի բաժնի ղեկավար

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
30 հունիսի 2014թ.

հազ. դրամ	Ծնթգ.	2013թ.	2012թ.
Ակտիվներ			
Հիմնական միջոցներ	10	15,271,903	11,505,015
Ոչ նյութական ակտիվներ	11	7,061,089	1,147,118
Տրված փոխառություններ		23,863	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		5,400	5,400
Ոչ ընթացիկ ակտիվներ		**22,362,255**	**12,657,533**
Պաշարներ		183,140	81,258
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	12	1,171,828	737,127
Կանխավճար շահութահարկի գծով		16,851	-
Կանխավճարներ այլ հարկերի գծով	13	1,649,216	1,133,755
Կանխավճարներ		345,706	384,252
Տրված փոխառություններ		43,552	63,236
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	62,298	103,317
Ընթացիկ ակտիվներ		**3,472,591**	**2,502,945**
Ընդամենը ակտիվներ		**25,834,846**	**15,160,478**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	15	15,050	15,050
Կուտակված վնաս		(24,569)	(908,743)
Լրացուցիչ կապիտալ		6,519,894	4,856,067
Ընդամենը սեփական կապիտալ		**6,510,375**	**3,962,374**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	13,820,246	6,420,894
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	1,280,587	1,052,367
Ոչ ընթացիկ պարտավորություններ		**15,100,833**	**7,473,261**
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	1,443,817	1,939,126
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	17	2,407,403	1,663,657
Վճարվելիք այլ հարկեր		75,135	43,791
Ընթացիկ հարկային պարտավորություն		297,283	78,269
Ընթացիկ պարտավորություններ		**4,223,638**	**3,724,843**
Ընդամենը պարտավորություններ		**19,324,471**	**11,198,104**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**25,834,846**	**15,160,478**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 51-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ծնթգ.	2013թ.	2012թ.
Հասույթ	5	8,836,297	5,128,344
Այլ եկամուտ		64,391	48,783
Ձեռքբերված ինտերնետ և հեռուստաալիքներ		(2,372,299)	(1,844,630)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր		(1,839,031)	(1,036,984)
Աշխատակազմի գծով ծախսեր		(1,222,743)	(648,183)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	6	(417,416)	(106,662)
Շուկայավարման ծախսեր		(220,498)	(99,871)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(113,807)	(74,942)
Իրականացված աշխատանքների ինքնարժեք		(100,944)	-
Օգուտ զեղչով ձեռքբերումից	20	196,012	-
Ոչ նյութական ակտիվների արժեզրկումից կորուստ	11	(92,346)	-
Այլ ծախսեր	7	(723,570)	(497,261)
Գործառնական գործունեության արդյունքները		**1,994,046**	**868,594**
Ֆինանսական եկամուտ	8	335	218
Ֆինանսական ծախսեր	8	(893,206)	(956,356)
Զուտ ֆինանսական ծախսեր		**(892,871)**	**(956,138)**
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**1,101,175**	**(87,544)**
Շահութահարկի գծով ծախս	9	(217,001)	(90,437)
Շահույթ/(վնաս) և ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար		**884,174**	**(177,981)**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2014թ. հունիսի 30-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Հայկ Եսայան
Տնօրեն

Արման Պողոսյան
Ֆինանսական տնօրեն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 51-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ընկերության մասնակիցներին վերագրելի					
հազ. դրամ	**Կանոնադ-րական կապիտալ**	**Լրացուցիչ կապիտալ**	**Կուտակված վնաս**	**Ընդամենը**	**Չվերահսկող բաժնեմաս**	**Ընդամենը սեփական կապիտալ**
Մնացորդը առ 1 հունվարի 2012թ.	15,050	1,982,397	(730,762)	1,266,685	16,665	1,283,350
Սկզբնական զեղչ մասնակցից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի և փոխառությունների գծով՝ առանց 718,417 հազար դրամ գումարով հետաձգված հարկի (ծնթգ. 16)	-	2,873,670	-	2,873,670	-	2,873,670
Վնաս և ընդամենը համապարփակ վնաս տարվա համար	-	-	(177,981)	(177,981)	-	(177,981)
Չվերահսկող բաժնեմասերի ձեռքբերում՝ առանց վերահսկողության փոփոխության	-	-	-	-	(16,665)	(16,665)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ.	**15,050**	**4,856,067**	**(908,743)**	**3,962,374**	**-**	**3,962,374**
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ.	15,050	4,856,067	(908,743)	3,962,374	-	3,962,374
Սկզբնական զեղչ մասնակցից ցածր տոկոսադրույքով ստացված վարկերի և փոխառությունների գծով՝ առանց 415,958 հազար դրամ գումարով հետաձգված հարկի (ծնթգ. 16)	-	1,663,827	-	1,663,827	-	1,663,827
Շահույթ և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	884,174	884,174	-	884,174
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	**15,050**	**6,519,894**	**(24,569)**	**6,510,375**	**-**	**6,510,375**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 51-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2013թ.	2012թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ	10,326,663	5,837,159
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(4,761,677)	(4,435,587)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(962,665)	(788,869)
Վճարումներ շահութահարկի գծով	(195,547)	(44,501)
Վճարված հարկեր և տուրքեր՝ բացառությամբ շահութահարկի	(1,381,456)	(1,818,820)
Վճարված տոկոսներ	(191,002)	(239,518)
Գործառնական գործունեության միջոցով ստացված/ (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**2,834,316**	**(1,490,136)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Տրված փոխառություններ	(107,801)	(64,000)
Դուստր կազմակերպությունների ձեռքբերում՝ առանց ձեռքբերված դրամական միջոցների	-	(1,077,540)
Տրված փոխառությունների մարում	150,818	42,100
Ստացված տոկոսներ	211	218
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,673,298)	(4,685,891)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(5,848,625)	-
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարների վերադարձ	-	980,000
Ներդրումային գործունեության միջոցով օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(10,478,695)**	**(4,805,113)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Հոսքեր վարկերից և փոխառություններից	10,375,081	12,525,543
Վարկերի և փոխառությունների մարում	(2,787,612)	(6,203,525)
Չվերահսկվող բաժնեմասի ձեռքբերում	-	(16,665)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**7,587,469**	**6,305,353**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(56,910)**	**10,104**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	103,317	86,192
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	15,891	7,021
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծնթգ. 14)	**62,298**	**103,317**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 51-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ: